ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Իջևան «17» «07» 2020թ.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղը (այսուհետ՝ ԲՈՒՀ) ի դեմս տնօրենի պաշտոնակատար Ա. Հ. Մակարյանի, որը գործում է Կանոնադրության հիման վրա, և «ԻՋԵՎԱՆԻ ԲԵՆՏՈՆԻՏ ԿՈՄԲԻՆԱՏ» ԲԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) ի դեմս տնօրեն Ա. Պետրոսյանի, որը գործում է ՀՀ օրենսդրության հիման վրա (հետագա տեքստում երկուսը միասին՝ Կողմեր), կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Ընկերությունը պարտավորվում է կազմակերպել ԲՈՒՀ-ի ուսանողների պրակտիկան ներկայացված ուսանողների անվանացանկի հիման վրա, սույն պայմանագրով սահմանված պայմաններով և ժամկետներում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Ընկերությունը պարտավոր է՝

2.1.1. կազմակերպել ԲՈՒՀ-ի ուսանողների պրակտիկան իր մոտ ընդունված և գործող ներքին իրավական ակտերին համապատասխան,

2.1.2. ԲՈՒՀ-ի հետ համատեղ քննարկել ուսանողների պրակտիկան կազմակերպելու հետ կապված առաջարկությունները,

2.1.3. պրակտիկա կազմակերպելուց առաջ ծանոթացնել ուսանողին Ընկերությունում գործող գործարար էթիկայի և վարքագծի, ներքին կարգապահական հիմնական նորմերին ու կանոններին,

2.1.4. ուսանողների պրակտիկայի ղեկավար նշանակել Ընկերության փորձառու աշխատակիցներին,

2.1.5. ուսանողների պրակտիկայի ժամկետն ավարտելուց հետո ուսանողի կողմից իրականացված պրակտիկայի վերաբերյալ օրագրում կատարել համապատասխան գրառումներ՝ ապահովելով պրակտիկայի կազմակերպման համար նշանակված ղեկավարների ստորագրությունները և, ըստ ուսանողների ցանկության, տրամադրել բնութագրեր:

2.2. Ընկերությունն իրավունք ունի՝

2.2.1. միակողմանի դադարեցնել սույն պայմանագիրը՝ այդ մասին նախօրոք գրավոր տեղեկացնելով ԲՈՒՀ-ին,

2.2.2. պրակտիկայի ընթացքում ուսանողների կողմից Ընկերությունում գործող էթիկայի և վարքագծի, ներքին կարգապահական հիմնական նորմերի ու կանոնների խախտումներ հայտնաբերելու դեպքում՝ միակողմանիորեն դադարեցնել կարգազանց ուսանողների պրակտիկան ու այդ մասին գրավոր տեղեկացնել ԲՈՒՀ-ին:

2.3. ԲՈՒՀ-ը պարտավոր է՝

2.3.1. իր կողմից նշանակել պրակտիկայի ընդհանուր ղեկավար,

2.3.2. օժանդակել Ընկերությանը պրակտիկայի կազմակերպման գործընթացում,

2.3.3. իրականացնել ուսանողների կողմից պրակտիկա անցնելու հսկողությունը,

2.3.4. անհրաժեշտության դեպքում իր կամ ուսանողների միջոցներով փոխհատուցել Ընկերությանը պրակտիկայի կազմակերպման ու անցկացման համար,

2.3.5. ուսանողներին նախօրոք հրահանգավորել Ընկերությունում գտնվելու ընթացքում պահպանելու իրենց առաջադրվող անձնական վարվելակերպի ու վարքագծի կանոնները, նրանց ընդհանուր իրավունքներն ու պարտականությունները,

2.3.6. երաշխավորել ուսանողների կողմից պրակտիկայի ընթացքում իրենց հայտնի դարձած բոլոր տեսակի ծառայողական և այլ բնույթի տեղեկությունների գաղտնիության պահպանումը,

2.3.7. ուսանողների ցուցակները ներկայացնելիս նշել յուրաքանչյուր ուսանողի մասնագիտական ուսումնառության առարկան և պրակտիկայի գործողության ժամկետը, ինչպես նաև Ընկերության պահանջով այլ անհրաժեշտ տեղեկություններ:

2.4. ԲՈՒՀ-ն իրավունք ունի՝

2.4.1. պահանջել Ընկերությունից պատշաճ կերպով կազմակերպել ուսանողների պրակտիկան,

2.4.2. պրակտիկայի վերաբերյալ ուսանողներից ստացված բողոք-պահանջների վերաբերյալ իրեն հայտնի դարձած տեղեկություններն անհապաղ հայտնել Ընկերությանը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

3.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից կնքման պահից և գործում է մինչև 30.06.2021թ.

3.2. Սույն պայմանագրի գործողության ժամկետը կարող է երկարաձգվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, որի վերաբերյալ կազմում և ստորագրվում է լրացուցիչ համաձայնագիր:

3.3.Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել միակողմանիորեն՝ Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ մյուս կողմին այդ մասին գրավոր տեղեկացնելու պայմանով:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում կողմերը կրում են պատասխանատվություն ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.2. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում պրակտիկա անցնող ուսանողների հաճախումների համար:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրերի կնքման միջոցով:

5.2. Սույն պայմանագրից ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են Կողմերի միջև բանակցությունների միջոցով:

5.3. Սույն պայմանագիրը կազմվում է 2 (երկու) օրինակից և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

6. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

ԲՈՒՀ	ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
«Երևանի պետական համալսարան»	«ԻՋԵՎԱՆԻ ԲԵՆՏՈՆԻՏ
հիմնադրամի Իջևանի մասնաճյուղ	ԿՈՄԲԻՆԱՏ» ԲԲԸ
Տավուշի մարզ, ք. Իջևան	Տավուշի մարզ,
Ուսանողական 3	Ազատամուտի շրջան
Տնօրենի պաշտոնակատար՝	տնօրեն՝
Ա. Հ. Մակարյան	Ա. Պետրոսյան
---	---
Ստորագրություն	Ստորագրություն
Կ.Տ.	Կ.Տ.